

- ռիսկերի նվազեցում
- մրցակցության հաղթահարում
- ռեսուրսների խնայողություն
- պետական և այլ խոչընդոտների հաղթահարում ու շրջանցում:

Հայաստանյան տեսակետից հատկապես հետաքրքիր են համատեղ ձեռնարկությունները: Դրանց ստեղծումը նպատակ ունի համակցել գործընկերների տիրապետած տեխնոլոգիաները: Նման գործելակերպը հատկապես բնութագրական և արդյունավետ է դեղագործական արդյունաբերության և գիտական հետազոտությունների համար: Համատեղ ձեռնարկությունների գործունեության արդյունքում ամեն գործընկեր, ներդնելով ոչ վերջնական հետազոտության արդյունք, ստանում է որակապես ավելի բարձր մակարդակի արդյունք:

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս համաշխարհային դեղագործական շուկայի ուսումնասիրությունը, ոլորտի վերջին զարգացումները բավականին նպաստավոր են հայկական դեղագործական արդյունաբերության զարգացման համար: Հայկական դեղագործության կիզակետում պետք է լինի թանկարժեք ջանքերի կնքների արտադրությունը: Նոր դեղամիջոցների ստեղծմանն ուղղված աշխատանքները նպատակահարմար է իրականացնել հզոր կազմակերպությունների հետ համատեղ: Հայաստանյան ձեռնարկությունների առաջնային, նպատակային շուկան ԱՊՀ երկրների շուկան է, որը կայացման փուլում է: Ինչպես հայտնի է, կայացած շուկայում նորահայտ ձեռնարկությունների առաջխաղացումը, որպես կանոն, շատ ավելի բարդ և թանկարժեք միջոցառում է, քան կայացող շուկաներում: Այդ պատճառով ոլորտի զարգացմանն ուղղված աշխատանքների հետաձգումը անբույլատրելի է:

ՄԵՐՈՒԺԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ասպիրանտ, կրտսեր գիտաշխատող

ԲՆԱԿՀՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԶԻՄԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ներկայումս ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից «Բնակչության կենսամակարդակ և սոցիալական ոլորտ» բաժնում գետեղվում են տվյալներ բնակչության դրամական եկամուտների ծավալի, դրանց կառուցվածքի և օգտագործման, մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձի, կենսաթոշակառուների թվաքանակի և թոշակի միջին չափերի, միջին ամսական աշխատավարձի, բնակչության ավանդների և այլնի վերաբերյալ:

Բնակչության դրամական եկամուտները ներառում են բնակչության բոլոր խմբերի աշխատանքի վարձատրությունը, կենսաթոշակները, նպաստները, կրթաթոշակները և այլ սոցիալական տրամաֆերտները, գյուղատնտեսական մթերքի վաճառքից մուտքերը, սեփականությունից եկամուտները՝ ներդրումների, արժեթղթերի, շահաբաժինների տոկոսների տեսքով, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվածների եկամուտները, արտարժույթի վաճառքից եկամուտները:

Բնակչության դրամական ծախսերը և խնայողությունները ներառում են ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերը, պարտադիր վճարները և կամավոր մուծումները (հարկեր և մուծումներ, ապահովագրական վճարներ, հասարակական կազմակերպությունների անդամավճարներ, բանկային և ապրանքային վարկերի համար տոկոսներ և այլն), արտարժույթի ձեռքբերման ծախսերը:

Իրական դրամական եկամուտները ընթացիկ ժամանակաշրջանի դրամական եկամուտներն են՝ ճշգրտված սպառողական ապրանքների և ծառայությունների գների ինդեքսով:

Աշխատողների միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների հաշվարկված գումարները (դրամական և բնեղեն-արտահայտությամբ) հարաբերելով միջին աշխատավարձի հաշվարկման համար ընդունված աշխատողների միջին ցուցակային թվաքանակին և տվյալ ժամանակաշրջանի ամիսների թվին [3, էջ 70]:

Աղյուսակ 1-ում բերված է ՀՀ բնակչության կենսամակարդակի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները: Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից 2005 թվականին 1995 թվականի համեմատությամբ մեկ շնչի հաշվով բնակչության դրամական եկամուտներն ավելացել են 588,4 տոկոսով, իսկ տնտեսությունում աշխատողների հաշվարկային անվանական միջին ամսական աշխատավարձը ավելի բարձր տեմպերով՝ 737,4 տոկոսով: Նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը վերը նշված երկու ցուցանիշների համեմատությամբ ավելացել է անհամեմատ ավելի փոքր չափերով՝ 415,6 տոկոսով: Ասվածը վկայում է այն մասին որ անցած տարիների ընթացքում կենսաթոշակի ավելացմանը ավելի պակաս ուշադրություն է դարձվել, ինչի հետևանքով զգալիորեն վատացել է կենսաթոշակառուների սոցիալական վիճակը: Բացի այդ, թեև վիճակագրությունը որպես ՀՀ բնակչության կենսամակարդակի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշներ օգտագործում է աղյուսակ 1-ում բերված վեց ցուցանիշները, սակայն դրանք ամբողջովին չեն բնութագրում բնակչության կենսամակարդակի բոլոր կողմերը:

ՀՀ բնակչության կենսամակարդակի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները¹

	1995	1998	2000	2001	2002	2003	2004	2005
Բնակչության դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով, դրամ	76940	153175	214189	269176	316109	362788	408004	452683
Բնակչության իրական դրամական եկամուտները, տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ	111.8	106.2	110.6	103.0	116.1	109.6	105.2	114
Տնտեսությունում աշխատողների հաշվարկային ամսական միջին ամսական աշխատավարձը, դրամ	7060	18000	22706	24483	27324	34783	43445	52060
Իրական աշխատավարձը, տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ	146.3	121.9	113.5	104.6	110.4	121.6	116.7	119.1
Նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը, դրամ	2359	3793	4473	4574	5748	7452	8842	9805
Նշանակված իրական ամսական կենսաթոշակի միջին չափը, տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ	58.7	95.0	101.0	100.4	122.4	133.2	118.6	110.9

Յուրաքանչյուր պետության համար, առանձնապես վարչահրամայականից շուկայական տնտեսության անցման պայմաններում կարևորագույն հիմնախնդիր է անցման դժվարությունների հաղթահարումը և բնակչության, հատկապես, սոցիալապես թույլ պաշտպանված շերտերի պաշտպանությունը: Որպես այդպիսիք հանդես են գալիս պետության կողմից բնակչությանը հատկացրած հիմնական սոցիալական երաշխիքները: Ըստ էության, դրանք այն նվազագույն պայմաններն են, որոնք տրվում են պետության կողմից իր քաղաքացիներին գոյատևելու համար: Ինչպես երևում է աղյուսակ 2-ի տվյալներից Հայաստանի Հանրապետությունում բնակչությանը հատկացված հիմնական սոցիալական երաշխիքները պարզապես թույլ են տալիս մի կերպ գոյատևել:

Պետության կողմից բնակչությանը հատկացրած հիմնական սոցիալական երաշխիքները²

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
Կենսաթոշակի նվազագույն չափը, դրամ	2000	2000	2000	2860	2900	2900	3000	3000	3000	3000	4000
Աշխատողների և ծառայողների նվազագույն աշխատավարձի չափը, դրամ	540	830	1000	1000	5000	5000	5000	5000	5000	13000	13000
Գործազրկության նպաստի միջին չափը, դրամ	2015	2192	1800	1825	3039	3164	3307	3260	3217	3332	6166
Կենսաթոշակների միջին չափը, դրամ՝ ամսում	2359	3152	2634	2754	4421	4473	4574	5748	7452	8842	9805
Երկարամյա ծառայության արտոնյալ պայմաններով	2242	2843	3491	3520	4081	4107	4109	5378	7120	8153	9377
Ընդհանուր հիվանդությունների հետևանքով հաշմանդամության	2259	3092	3576	3745	4306	4327	4341	5645	7384	7210	9269
Ընդհանուր հիվանդությունների հետևանքով հաշմանդամ երեխաներ	2222	2719	3142	3253	3831	3837	3838	4933	6090	6829	7725
Կրթաթոշակների նվազագույն չափը, դրամ՝ ամսում	2262	2435	2434	2514	3113	3100	3431	3600	3600	3601	4800
ԲՈՒՀ-երի ուսանողների											
միջին մասնագիտական հաստատությունների սովորողների	2215	2770	3200	3200	3200	4000	4000	5000	5000	5000	5000
ԲՈՒՀ-երի և գիտահետազոտական հիմնարկներին կից ասպիրանտուրայում արտադրությունից կտրված ուսուցումով սովորող ասպիրանտների	2120	2650	3200	3200	3000	3000	3000	3725	3725	3725	3725
ԲՈՒՀ-երի և գիտահետազոտական հիմնարկներին կից ասպիրանտուրայում արտադրությունից կտրված ուսուցումով սովորող ասպիրանտների	...	...	...	3500	3500	4000	6500	6500	6500	6500	6500

Աղյուսակ 3-ում բերված տվյալները վկայում են, որ կենսաթոշակի ամսական չափերը իրոք որ եղել են չնչին մեծություններ: Իսկ կենսաթոշակառուների առանձին խմբերում 1995-2005թթ. կենսաթոշակի միջին ամսական մեծությունները ավելի ցածր են եղել: Այսպես, հաշմանդամության համար տրվող կենսաթոշակի չափը 1995-2005թթ. ավելացել է ընդամենը 323,6 տոկոսով, իսկ կերակրողին կորցրած կենսաթոշակառուի միջին ամսական կենսաթոշակի չափը ավելացել է ընդամենը 241,0 տոկոսով:

Բնակչության տարեց խմբերում իրականացված սոցիալական չիմնավորված քաղաքականության արդյունքում զգալիորեն պակասել է կենսաթոշակառուների թիվը: Բավական է նշել, որ 1995-2005թթ. մրանց թվաքանակը պակասել է 108,6 հազար մարդով, առավելապես վատ է եղել վիճակը կերակրողին կորցրած կենսաթոշակառուների շրջանում: Վերջիններիս թիվը նշված ժամանակահատվածում կրճատվել է շուրջ կիսով չափ՝ 44,8 հազարից հասնելով 23,4 հազարի: Հետաքրքիր է նաև նշել, որ եթե 1995թ. տնտեսություններում գրավածների քանակը մեկ կենսաթոշակառուի հաշվով կազմել է 2,3 մարդ, ապա 2005 թ.՝ 2,1 մարդ (տե՛ս աղյուսակ 4):

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2001 (էջ 60), 2004 (էջ 71), 2006 (էջ 72):

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2001 (էջ 73-74), 2004 (էջ 85-86), 2006 (էջ 86-87):

Բնակչության սոցիալական ապահովագրության մարմիններում հաշվառված կենսաթոշակատուներին նշանակված կենսաթոշակի միջին ամսական չափը¹

դրամ

	1995	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
Կենսաթոշակի միջին ամսական չափը	2359	3793	4421	4473	4574	5748	7452	8842	9805
այդ թվում՝									
տարիքային	2308	3824	4402	4438	4457	5815	7960	9739	10909
հաշմանդամության	2263	3555	4608	4699	4785	5500	6095	6568	7323
կերակրողին կորցրած	3221	5003	4910	4606	4816	6027	6722	6952	7763
երկարամյա աշխատանքի համար	2242	3520	4081	4107	4109	5378	7120	8153	9377
սոցիալական	2830	2754	3393	3403	3379	3527	3560	3553	4669

Բնակչության սոցիալական ապահովագրության մարմիններում հաշվառված կենսաթոշակատուների թվաքանակը²

տարեկերպին

	1995	1998	2001	1999	2000	2002	2003	2004	2005
Ընդամենը կենսաթոշակատուներ, հազար մարդ	641.9	574.7	552.9	568.2	560.1	543.6	543.7	540.3	533.3
այդ թվում՝									
հաշմանդամության	105.6	100.7	106.9	101.5	103.9	108.4	110.6	113.4	116.3
կերակրողին կորցրած	44.8	24.7	24.1	24.4	23.9	23.6	23.5	23.7	23.4
երկարամյա ծառայության	20.5	18.9	19.1	19.0	19.0	19.5	18.1	14.6	13.8
սոցիալական	12.0	12.1	9.1	11.3	10.3	8.7	7.8	7.0	6.3
ըստ տարիքի	459.0	418.3	393.4	411.9	403.0	383.4	383.7	383.6	373.5
Տնտեսությունում զբաղվածների թվաքանակը մեկ կենսաթոշակատուի հաշվով, մարդ	2.3	2.4	2.3	2.3	2.3	2.0	2.0	2.0	2.1

Այսպես կոչված ծանրաբեռնվածության ցուցանիշը, որը ցույց է տալիս տնտեսությունում զբաղվածների և կենսաթոշակատուների հարաբերությունը ըստ 2006-ի տվյալների, մեկ կենսաթոշակատուի հաշվով տնտեսությունում զբաղված է եղել ընդամենը 2,1 մարդ, որը չափազանց փոքր ցուցանիշ է: Ընդ որում, նշված հարաբերությունն անփոփոխ է վերջին երեք տարիների ընթացքում, չնայած տնտեսության զգալի աճին: Վերջին տարիներին բազմիցս խոսվում է ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Եվրոպայի երկրներում տեղի ունեցող և մոտակա տասնամյակում խորացող բնակչության, այսպես կոչված, ծերացման գործոնի մասին, որն անխուսափելիորեն բերում է զբաղվածների վրա ծանրաբեռնվածության մեծացման: Խնդրի լուծման ուղղություններից է աշխատանքի արտադրողականության բարձրացումը: Չնայած Հայաստանում դեռևս մեծ ուշադրություն չի դարձվում այս գործոնին, սակայն ծանրաբեռնվածության գործակցի ցածր լինելը և վերջին տարիներին դրա անփոփոխ մնալը, կարծում ենք, առիթ պետք է հանդիսանա մշակվող կենսաթոշակային բարեփոխումների փաթեթում տնտեսության վրա զբաղվածներ/կենսաթոշակատուներ հարաբերության ցուցանիշի ազդեցությունը հաշվի առնելու համար:

Միջին ամսական աշխատավարձի և կենսաթոշակի ցուցանիշները Հայաստանում³

	2001	2002	2003	2004	2005	2006
Անվանական միջին ամսական աշխատավարձ, դրամ	24 322	27 214	34 046	43 430	52 059	64 278
անվան. միջին ամսական աշխատավարձի աճը նախորդ տարվա նկատմամբ, %	12.3	11.9	25.1	27.6	19.9	24.0
իրական աճը, %	8.9	10.7	19.6	19.2	19.2	20.5
Նշանակված կենսաթոշակի միջին չափը, դրամ	4 574	5 748	7 452	8 672	9 724	10 912
իրական աճը, %	-0.8	24.3	23.9	10.9	11.5	9.05
Միջին կենսաթոշակ / աշխատավարձ հարաբերությունը, %	18.8	21.1	21.9	20.0	18.6	17.0

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ տնտեսությունում վերջին տարիներին զգալի են աշխատողների միջին աշխատավարձի բարձրացման ուղղությամբ կատարված փոփոխությունները: Աղյուսակ 5-ում ներկայացված տվյալները վկայում են, որ միջին ամսական աշխատավարձը վերջին հինգ տարվա ընթացքում աճել է անվանական արտահայտությամբ՝ մոտ 2.4 անգամ, իսկ իրական արտահայտությամբ՝ մոտ

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2001 (էջ 72), 2004 (էջ 84), 2006 (էջ 85):

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2001 (էջ 71-72), 2004 (էջ 84), 2006 (էջ 85):

³ Հայաստանի տնտեսական զարգացումներ, տարեկան զեկույց 2006, Եր., AEPLAC, 2007, էջ 48

1.9 անգամ: Վերջին 3 տարիներին միջին ամսական աշխատավարձի իրական աճը գտնվում է տարեկան 19.2-20.5 տոկոսների միջև: Նույն ժամանակահատվածում աճում է նաև կենսաթոշակի միջին ամսական չափը, չնայած դրա աճը վերջին երկու տարիներին զիջում է աշխատավարձի աճին: Այդ տարբերության հաշվին 2006թ.-ին արձանագրվել է կենսաթոշակի նվազագույն կշիռը (վերջին տարիների համեմատությամբ) միջին աշխատավարձի նկատմամբ՝ 17 տոկոս:

Վերջին 5 տարիներին Հայաստանի տնտեսության կուտակային իրական աճը դրամական արտահայտությամբ կազմել է մոտ 84 տոկոս (կամ տարեկան միջին 13.0 տոկոս), որը փոխակերպվել է իրական աշխատավարձերի ավելի քան 2.25 անգամ կուտակային աճի (կամ տարեկան միջին 17.7 տոկոս): Ընդ որում, թեկուզ և տարբեր տեմպերով, իրական աշխատավարձի ցուցանիշն աճել է տնտեսության բոլոր ճյուղերում (Աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում ըստ տնտեսության ճյուղերի, դրամ¹

	2001	2002	2003	2004	2005	2006	Տնտեսության միջինի նկատմամբ ինդեքս, (միջինը = 100)	
							2001	2006
Ամսական միջին ամսական աշխատավարձ, դրամ	24 322	27 214	34 046	43 430	52 059	64 278	100.0	100.0
Արդյունաբերություն	35 822	41 786	53 053	59 761	68 266	84 251	147.3	131.1
Գյուղատնտեսություն	17 819	20 140	27 689	33 575	35 730	43 191	73.3	67.2
Շինարարություն	39 096	44 602	50 991	60 123	70 410	89 974	160.7	140.0
Տրանսպորտ	41 821	46 925	50 525	55 826	60 270	67 324	171.9	104.7
Կապ	45 725	53 853	56 236	57 908	70 129	95 752	188.0	149.0
Առևտուր, հանրային սնունդ	11 967	20 658	23 739	20 207	25 233	54 013	49.2	84.0
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	28 125	37 365	40 445	48 460	61 347	80 040	115.6	124.5
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	12 945	12 999	13 637	19 599	23 764	34 040	53.2	53.0
Կրթություն	12 459	14 891	19 036	26 666	38 665	48 144	61.2	74.9
Մշակույթ	10 456	11 457	13 821	19 390	24 273	36 176	43.0	56.3
Արվեստ	11 607	12 640	15 378	20 351	27 072	33 699	47.7	52.4
Գիտություն և գիտական սպասարկում	18 397	21 960	26 028	28 317	41 501	43 276	75.6	67.3
Վարկավորում և ապահովագրություն	98 732	110 762	135 632	149 797	173 564	207 750	405.9	323.2
Կառավարման ապարատ	36 034	39 066	53 465	66 110	75 441	88 332	148.2	137.4

Ինչպես երևում է աղյուսակ 6-ից նկատելի է նաև տարբեր ճյուղերում միջին աշխատավարձերի միջև եղած տարբերությունների նվազման միտումը վերջին վեց տարիներին: Եթե յուրաքանչյուր տարվա համար տնտեսության ճյուղերի աշխատավարձերի ստանդարտ շեղման և միջինի հարաբերությունը (որքան մեծ է հարաբերության արդյունքում ստացված թիվը, այնքան մեծ է աշխատավարձերի միջև տարբերությունը) հաշվենք, ապա սկսած 2001թ. մինչև 2006թ. այդ հարաբերությունը բնութագրող ցուցանիշը մշտապես նվազել է: Տնտեսության ճյուղերի միջև աշխատավարձերի համահարթեցման մասին է վկայում նաև յուրաքանչյուր ճյուղի համար հաշվարկված ինդեքսը, որը բնութագրում է այդ ճյուղի աշխատավարձը տնտեսության միջին աշխատավարձի նկատմամբ: Մասնավորապես, գրեթե բոլոր ճյուղերում, որտեղ 2001թ. աշխատավարձն ավելի բարձր է եղել 2006թ. համար այդ ինդեքսի նվազում է գրանցվել, իսկ ցածր աշխատավարձ ունեցող ճյուղերում, որոշ բացառություններով՝ հակառակը:

Ասվածից հետևում է, որ հանրապետությունում ավելի շատ ուշադրություն պետք է դարձնել կենսաթոշակատուների հիմնախնդիրներին և այս ոլորտում ակնհայտ է սոցիալական ակտիվ քաղաքականության վարման և արձատական վերափոխումների պահանջը: Խոսքը ոչ միայն կենսաթոշակատուների համար քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծելու և նվազագույն նյութական պայմաններ ապահովելու մասին է, այլ նաև առավել երիտասարդ սերունդների և պետության բարոյական պարտքն է նորմալ կենսապայմաններ ստեղծելու այն մարդկանց համար ովքեր ստեղծել են պետության հիմնական հարստությունը:

Բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմքը աշխատավարձի նվազագույն չափն է, որը սահմանվում է պետության կողմից (մեզանում այն սահմանվում է հանրապետության Նախագահի կողմից): Ըստ էության աշխատավարձի նվազագույն չափի սահմանմամբ պետությունը կարգավորում է նաև մասնավոր հատվածում ստեղծված ավելացված արժեքի բաշխումը գործատուների և աշխատողների միջև: Այսպես, եթե 1996թ. հոկտեմբերին նվազագույն աշխատավարձը ՀՀ-ում սահմանված էր 830 դրամ (մինչ այդ 1996թ. այն կազմել է 720 դրամ): 1999-1998թթ. նվազագույն աշխատավարձի չափը սահմանվել է 1000 դրամ 2001-2003թթ.՝ 5000 դրամ, 2004-2005թթ.՝ 13000 դրամ²: 2006թ. հունվարի 1-ից՝ 15000 դրամ, իսկ 2007թ. հունվարի 1-ից՝ 20000 դրամ: Ինչպես տեսնում ենք 1996-2007թթ. զգալիորեն բարձրացել է նվազագույն աշխատավարձի չափերը:

¹ Հայաստանի տնտեսական զարգացումներ, տարեկան զեկույց 2006, Եր., AEPLAC, 2007, էջ 49-50

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎՏ, Երևան 2001, էջ 67, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎՏ, Երևան 2006, էջ 79:

Սոցիալական ոլորտում վարվող քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը միջին ամսական աշխատավարձի և սահմանված նվազագույն աշխատավարձի հարաբերակցության կարգավորումն է: Որպես կանոն այդ երկու մեծությունների հարաբերակցությունը պետք է փոքրամա և խզվածքը դրանց միջև պետք է ձգտի նվազագույնի: Ինչպես ցույց է տալիս աղյուսակ 7-ի տվյալները, եթե 1995-2005թթ. համրապետությունում աշխատողների միջին աշխատավարձը դրամական արտահայտությամբ ավելացել է 806,4 տոկոսով (դոլարային արտահայտությամբ 721,4 տոկոսով), ապա 1996-2005թթ. նվազագույն աշխատավարձի չափն ավելացել է ավելի քան 18 անգամ, ինչի հետևանքով միջին և սահմանված նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը 1995թ. կազմել է 1499,1 տոկոս, իսկ 2005թ.՝ 502,2 տոկոս: Աղյուսակից միաժամանակ ակնհայտ է դառնում, որ 1997-1998թթ. միջին և սահմանված նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը ոչ թե նվազել, այլ ավելացել է համապատասխանաբար կազմելով 1616.3 և 1998.1 տոկոս, ինչը կարելի է համարել նշված տարիների սոցիալական քաղաքականության լուրջ անհաջողություն: Առաջիկայում նույնպես այս հարաբերակցությունը պետք է փոխվի հոգուտ նվազագույն աշխատավարձի բարձրացման:

Աղյուսակ 7

Աշխատողների միջին ամսական աշխատավարձը դրամներով, ԱՄՆ դոլարներով և միջին ու սահմանված նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը տոկոսներով՝

դեկտեմբերին

Տարիներ	Աշխատողների միջին աշխատավարձը		Միջին և սահմանված նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը տոկոսներով
	դրամ	ԱՄՆ դոլար (ԿԲ փոխարժեքով)	
1995	8095	20.1	1499.1
1996	1114	25.3	1339.0
1997	16163	32.4	1616.3
1998	19981	38.6	1998.1
1999	22728	43.4	454.6
2000	26461	47.7	529.2
2001	28299	50.1	566.0
2002	31967	54.7	639.3
2003	44586	79.0	891.7
2004	52926	109.0	407.1
2005	65282	145.0	502.2

Սոցիալական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը վերաբերում է միջին ամսական անվանական աշխատավարձին և սպառողական գների ինդեքսների փոփոխությանը: Եթե սպառողական գների աճը գերազանցում է միջին ամսական անվանական աշխատավարձին, ապա տեղի է ունենում իրական աշխատավարձի անկում, ինչը հանգեցնում է մաս կենսամակարդակի նվազեցմանը. և ընդհակառակը: Ասվածից հետևում է որ սոցիալական քաղաքականության արդյունավետությունը գնահատող կարևորագույն չափանիշներից մեկն այն է, որ միջին անվանական աշխատավարձի ինդեքսը գերազանցի սպառողական գների ինդեքսին: Այդ օրինաչափությունը, պաշտոնական վիճակագրության համաձայն, պահպանվել է 1995-2005թթ. (տես աղյուսակ 8-ը):

Աղյուսակ 8

Միջին ամսական անվանական աշխատավարձի և սպառողական գների ինդեքսների փոփոխությունը՝
Նախորդ տարվա նկատմամբ

Տարիներ	Միջին ամսական աշխատավարձի ինդեքսը, անգամ	Սպառողական գների ինդեքսը, անգամ	Միջին ամսական աշխատավարձի և սպառողական գների աճի տեմպերի հարաբերակցությունը, %
1995	4.0	2.8	146.3
1996	1.3	1.2	113.0
1997	1.4	1.1	125.8
1998	1.3	1.1	121.9
1999	1.1	100.6*	111.3
2000	1.1	99.2*	113.5
2001	1.1	103.1*	104.6
2002	1.1	101.1*	110.4
2003	1.3	104.7*	121.6
2004	1.2	107.0*	116.7
2005	1.2	100.6*	119.1

* տոկոսներով:

Ինչպես անցումային բազմաթիվ երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում սոցիալական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը աշխատանքի վարձատրության՝ որպես

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2001 (էջ 69-71), 2004 (էջ 81), 2006 (էջ 81-84):

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2001 (էջ 68), 2004 (էջ 80), 2006 (էջ 81):

գործունեության խթանման շարժառիթի բարձրացումն է: Ինչպես ցույց է տալիս ՀՀ բնակչության դրամական եկամուտների, ծախսերի և դրանց կառուցվածքի (տե՛ս աղյուսակ 9) ուսումնասիրությունը, հատկապես 2001թ. սկսած, բնակչության դրամական եկամուտների կազմում զգալիորեն բարձրացել է վարձու աշխատողների վարձատրության բաժինը 2001թ. 28.8 տոկոսից 2005թ. հասնելով 34.5 տոկոսի: Սակայն այդ աճը չի կարելի համարել բավարար, որովհետև բնակչության դրամական եկամուտների ավելի քան 2/3-ը ստացվում է այլ աղբյուրներից: Հատկապես բարձր է «Մուտքեր ֆինանսական համակարգից, եկամուտներ սեփականությունից, ձեռնարկատիրական գործունեությունից և այլն» հոդվածի բաժինը: Թեև ուսումնասիրված ժամանակահատվածում վերջինիս բաժինը ամենաբարձրն է եղել 1998թ. (բնակչության դրամական եկամուտներում այն կազմել է 61.3 տոկոս), սակայն այն շարունակում է մնալ բարձր: Բնակչության դրամական եկամուտներում զգալի է մաս տարադրամի վաճառքից մուտքերի բաժինը, որը 2001-2005թթ. աճել է ավելի քան 2.6 անգամ՝ կազմելով դրամական եկամուտների շուրջ 1/5 մասը:

Բնակչության դրամական եկամուտների աճը 1995-2005թթ. կազմել է ավելի քան 503 տոկոս, վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը՝ 495.8 տոկոս, սոցիալական տրանսֆերտներինը՝ 421.0 տոկոս, «Մուտքեր ֆինանսական համակարգից, եկամուտներ սեփականությունից, ձեռնարկատիրական գործունեությունից և այլն» հոդվածի գծով աճը կազմել է 348.3 տոկոս:

Բնակչության դրամական ծախսերը և խնայողությունները 1995-2005թթ. բնակչության դրամական եկամուտների համեմատությամբ աճել են ավելի բարձր տեմպերով կազմելով 512,4 տոկոս, ըստ որում «Ապրանքների գնման ու ծառայությունների վճարման համար այլ ծախսեր» հոդվածի գծով նշված ժամանակահատվածում աճը կազմել է 454,2 տոկոս, ինչի հետևանքով բնակչության դրամական ծախսերի և խնայողությունների կազմում վեր նշված հոդվածի բաժինը 1995թ. 92,0 փոխարեն նվազել է 2005թ. կազմել 81,5 տոկոս: Նշված ժամանակահատվածում ավելի քան 9 անգամ ավելացել է պարտադիր վճարների և կամավոր մուծումների գումարը: Բնակչության դրամական ծախսերի և խնայողությունների կազմում դեռևս բարձր չէ «Խնայողությունների կուտակումն ավանդներում և արժեթղթերում» հոդվածի բաժինը (այն 2005թ. կազմել է 1.1 տոկոս, տե՛ս աղյուսակ 9):

Աղյուսակ 9

Բնակչության դրամական եկամուտները, ծախսերը և դրանց կառուցվածքը¹

(ոմբացիկ գներով)

	1995	1998	2000	2001	2002	2003	2004	2005
Բնակչության դրամական եկամուտները	289,3 ¹ 100	581,3 100	814,5 100	865,2 100	1015,2 100	1165,0 100	1311,3 100	1456,5 100
այդ թվում՝								
վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	101,2 35.0	177,6 30.6	208,4 25.6	248,8 28.8	325,7 32.1	372,8 32.0	429,5 32.8	501,8 34.5
սոցիալական տրանսֆերտներ	25,1 8.7	47,3 8.1	61,0 7.5	65,3 7.6	68,0 6.7	73,0 6.3	81,7 6.2	103,4 7.1
մուտքեր ֆինանսական համակարգից, եկամուտներ սեփականությունից, ձեռնարկատիրական գործունեությունից և այլն	162,9 56.3	356,3 61.3	430,1 52.8	439,8 50.8	463,3 45.6	510,4 43.8	552,3 42.1	567,4 38.9
մուտքեր տարադրամի վաճառքից	-	-	115,1 14.1	111,2 12.8	158,1 15.6	208,8 17.9	247,7 18.9	283,9 19.5
Բնակչության դրամական ծախսերը և խնայողությունները	274,5 100	578,9 100	798,7 100	860,1 100	988,9 100	1158,9 100	1302,6 100	1406,8 100
այդ թվում՝								
ապրանքների գնման ու ծառայությունների վճարման համար այլ ծախսեր	252,6 92.0	552,1 95.4	607,9 76.1	705,5 82.1	801,8 81.1	945,8 81.6	1071,2 82.2	1147,4 81.5
պարտադիր վճարներ և կամավոր մուծումներ	8,8 3.2	20,9 3.6	44,8 5.6	38,9 4.5	41,6 4.2	50,5 4.4	63,7 4.9	79,1 5.6
խնայողությունների կուտակումն ավանդներում և արժեթղթերում	13,0 4.8	5,9 1.0	16,8 2.1	7,3 0.8	4,3 0.4	1,2 0.1	10,5 0.8	14,9 1.1
տարադրամի գնում	-	-	129,1 16.2	108,5 12.6	141,2 14.3	150,8 13.0	157,3 12.1	165,3 11.8

¹ Ընդգրկված է մախորդ հոդվածների մեջ:

² Համարիչում մյուս դրամ, հայտարարում՝ տոկոսներով:

Ինչպես վկայում է ուսումնասիրությունը վերջին տարիներին մեզանում տեղի է ունեցել բնակչության կենսամակարդակի որոշակի բարձրացում: Դրա ապացույցներից մեկն այն է, որ 1995-2005թթ. զգալիորեն ավելացել է (6.1 անգամ) ավանդների գումարը 1995թ. 15.8 մլրդ դրամից 2005թ.-ին հասնելով 96.3 մլրդ դրամի: Այդ ժամանակահատվածում ավելացել է մաս (1.85 անգամ) բանկերում սպասարկվող ֆիզիկական անձանց թիվը 360 000-ից հասնելով 666 000-ի, ավանդի միջին չափը ավելացել է շուրջ 33 անգամ, իսկ 1 շնչի հաշվով ավանդի միջին չափը շուրջ 71 անգամ (տե՛ս աղյուսակ 10):

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2001 (էջ 60-62), 2004 (էջ 71-73), 2006 (էջ 72-74):

Բնակչության ավանդները բանկային համակարգում¹

տարեկերպ

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
Բանկային հաստատությունների քանակը ² , միավոր	35	211	207	208	216	230	273	249	248	256	294
Բանկերում սպասարկվող ֆիզիկական անձինք, հազ. մարդ	360	382	373	135	385	333	326	306	372	453	666
Ավանդների գումարը, մլն դրամ	15849	19614	32955	35361	30685	46734	54707	59108	70899	51375	96273
Ավանդի միջին չափը, դրամ	4403	5135	8835	39675	79701	140342	167813	193163	190589	179636	144554
Ավանդի միջին չափը բնակչության մեկ շնչի հաշվով, դրամ	422	522	873	1411	8073	12295	17015	18397	22085	25333	29922

¹ Բանկերի գլխամասերի և դրանց մասնաճյուղերի քանակը:

Բնակչության շրջանում բանկային համակարգի վստահության և բանկային համակարգի հուսալիության բարձրացումը նախադրյալներ կարող է ստեղծել ֆինանսական գործիքների միջոցով խնայողությունները վերածելու ներդրումների, ինչը լուրջ խթան և նյութական բազա կհանդիսանա տնտեսության զարգացման, հետևաբար, նաև բնակչության եկամուտների ավելացման և կենսամակարդակի բարձրացման համար:

ԱՆՆԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Հայկական կրթական համակարգն ունի 1600 տարվա պատմություն և ավանդաբար այն բարձր է գնահատվել: Հայաստանի ներկա կրթական համակարգի հիմքերը դրվել են Հայաստանի առաջին Հանրապետության ժամանակ և հետագայում զարգացում ապրել խորհրդային շրջանի 70 տարիների ընթացքում: Խորհրդային կրթական համակարգն իր բոլոր թերություններով հանդերձ, հզոր համակարգ էր՝ ընդհանուր միջնակարգ կրթություն ապահովող ենթահամակարգով, ինչը հնարավորություն էր տալիս ԽՍՀՄ-ին առաջնային դիրք զբաղեցնել գիտական հետազոտությունների բնագավառում և ստեղծել վերակառուցման նյութական ու կադրային նախադրյալներ, որոնք անհրաժեշտ էին շուկայական տնտեսությանն անցման ճանապարհին:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանը կանգնեց մի շարք դժվարությունների առջև՝ ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական: Մի կողմից կրթական համակարգը պետք է դիմակայեր անցման շրջանի անմախաղեպ դժվարություններին, մյուս կողմից՝ շատ կարճ ժամանակահատվածում պետք է բավարար չափով համապատասխաներ նոր սոցիալական և տնտեսական պահանջներին:

1990-ական թթ. ի վեր ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում կատարվել են արժանատի վերափոխումներ:

Արժանատի դրվել է վճարովի ուսուցման համակարգը, պետական ուսումնական հաստատություններին գույքահեռ գործում են ոչ պետական կրթական հաստատություններ, ընդունվել են ոլորտը կարգավորող օրենսդրական հիմնարար ակտեր, փաստաթղթեր և որոշումներ, մեկնարկել է ԲԿԵՏ (Բարձրագույն Կրթության Եվրոպական Տարածք) ինտեգրման գործընթացը:

ՀՀ կրթական համակարգը պետական կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող տարրեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է²:

Կրթական համակարգի կառուցվածքից, կրթական հաստատություններից, դրանց կողմից մատուցվող բարձրորակ կրթական ծառայություններից է կախված ամբողջ հասարակության զարգացումը ժամանակակից աշխարհում:

«Կրթության մասին» ՀՀ օրենքում «կրթական համակարգ» հասկացության մեջ համակցվում են հետևյալ օբյեկտները՝ կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների փոխհարաբերությունների ամբողջությունը, կրթությունն իրականացնող հաստատությունները, ինչպես նաև դրանց կառավարման մարմինները: Այսպիսով կրթական համակարգը կառավարվող ցանց է՝ հագեցած կրթական գործունեությամբ, կրթական գործընթացով, կանոնակարգված ծրագրերով, գործընթացի մասնակիցների փոխհարաբերություններով: Կրթական հաստատությունների ցանցը կրթական համակարգի կարևորագույն բնութագրիչներից է:

Բարձրագույն կրթությունն իրականացվում է տարբեր ուսումնական հաստատություններում: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ ուսումնական հաստատությունը պետական հիմնարկ է կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագրեր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան:

ՀՀ-ում գործում են տարբեր բուհական հաստատություններ՝ համալսարաններ, ակադեմիաներ, ինստիտուտներ, կոնսերվատորիա:

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2001 (էջ 75), 2004 (էջ 87), 2006 (էջ 88):

² «Կրթության մասին» ՀՀ օրենքը, հոդված 8, էջ 10: